

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍԵՒԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ. Յովհաննէս Պլուզ Երզնկացիի «Ի Տաճկաց իմաստասիրաց»ը և իմաստասիրական արձակը իսլամական աղբիւրներում լոյսին տակ, Պէլ-րուս, 1991, 228 էջ:

Սեդա Պարսումյան-Տատոյանը նոր անուն չէ հայագիտության մեջ: Բազմաշնորհ մտա-վորականի կարողությունները դրսևորվել են արվեստի և գիտության տարբեր բնագա-վառներում, և երկու տասնամյակից ավելի է, որ նա արդյունավետ աշխատանք է կատա-րում մասնավորապէս գեղագիտության և ի-մաստասիրական մտքի պատմության ուսում-նասիրության ասպարեզում: Տեղական որո-նումների արդյունք է նրա «Հովհաննէս Պը-լուզ Երզնկացիի «Ի Տաճկաց իմաստասի-րաց»ը և իմաստասիրական արձակը իսլամա-կան աղբիւրներում լոյսին տակ» ծավալուն հետազոտությունը, որ վերահաստատում է ևս մի անգամ նրա՝ տրորված արահետներից խուսափելու հակումը:

Հայ մատենագրության բեղմնավոր ու հե-տաքրքրական այս դեմքի՝ Հովհաննէս Պլու-զի ծառանգության ուսումնասիրությամբ վեր-ջին տասնամյակներին գրադվել են Հ. Քյուրտյանն ու Լ. Խաչիկյանը, Ա. Սրապյանն ու Ս. Արևշատյանը, Գ. Գրիգորյանն ու Է. Բաղդասարյանը, բազմաթիվ բանասերներ, պատմաբաններ, փիլիսոփաներ: Սակայն ոչ միայն դեռևս չի սպառվել ասելիքը, այլև նրա բազմահարուստ ծառանգությունը դեռ բազում գյուտեր ու անակնկալներ ունի ան-թեղած հետազոտողի համար: Այդպիսի անա-կընկալ էր Ս. Պարսումյան-Տատոյանի ներ-կա աշխատությունը, որ նվիրված է Երզնկա-ցու գործունեության մի կարևոր հատվածի նորովի դիտարկման և նրա որոշ հայացք-ների գնահատության, դրանց սկզբնաղբյուր-ները բացահայտելու գործին:

Աշխատության մեջ ծանրակշիռ տեղ ունի հայ-իսլամական, առավել ճշգրիտ՝ հայ-արա-բական մատենագրական-իմաստասիրական կապերի լուսաբանումը: Վերջին տասնամյակ-ներից շատ հարգի էր գրական-պատմական կապերի ուսումնասիրությունը, որ, դժբախ-տաբար, տոնական-ճառային բնույթ էր կը-րում, ինչպես Ե. Չարենցը կասեր՝ պլակատի ու թեթև թմբուկի հանգամանք էր ստացել: Իսկ ներկա դեպքում մենք գործ ունենք միանգամայն գործնական, զուտ գիտական շարժառիթի և կատարման հետ: Մշակութա-յին կապերի և քարեկամության սովորական այդ կաղապարի փոխարեն տեսնում ենք միջ-

մշակութային հարաբերությունների լրջմիտ ու սթափ վերլուծություն:

1958 թ. Ս. Արևշատյանը հայտնաբերեց և հրատարակեց Պլուզի «Ի Տաճկաց իմաստա-սիրաց գրոց քաղեալ բանք» աշխատությունը՝ իբրև «ուշադրության արժանի գործ ոչ միայն այն տեսակետից, որ այն Պլուզի դեռևս չու-սումնասիրված գրվածքներից մեկն է», այլև այն պատճառով, որ Երզնկացին ի մի է հա-վաքել միջնադարի մահմեդական իմաստա-սերների «այն ասույթներն ու գաղափարները, որոնց համամիտ է և ինքը» («Բանբեր Մա-տենադարանի», № 4, 1958, էջ 299):

Մեծ բանաստեղծի ու մտածողի աշխատու-թյան խորագիրն իսկ հուշում էր, որ սկզբն-աղբյուրը (կամ սկզբնաղբյուրները) առաջին հերթին պետք է որոնել արաբական մատե-նագրության մեջ: Եվ Ս. Պ.-Տատոյանի պըր-պրտումները նրան հանգեցրին այն համոզ-ման, թե որոնելի աղբյուրը «Մաքրության եղբայրության թղթեր» («Բուսաբէ») աշխա-տությունն է, որը որոշ իմաստով այսօր ևս չի կարելի համարել մեռած գրական հուշար-ձան: Այնտեղ արծարծվում են կենդանի կյանքի ամենաբազմազան հավերժական խըն-դիրներ. թերևս ամենից առաջ դրանով է պայմանավորվում «Քոթերի» արժեքը: Մաք-րության եղբայրության մեկնությունը, օրի-նակ, «Ժ դարուն մէջ ընդհանուր քայքայումի և ապականութեան պատճառը օրումն վար-չակարգն է... երբ կ'ապականի քաղաքական կառոյցը՝ կ'ապականի նաև անհատը»: Մաք-րության ընկերությունն առաջադրում է «վե-րակատուցումի ծրագիր մը», իսկ վերակա-տուցումն իրականացնելու քարոզական իրա-վունք և օրյեկտիվ հնարավորություն ունեն միայն նրանք, ովքեր ապականված չեն (էջ 57): Հովհաննէս Երզնկացուն հավանաբար գրադել են այս կարգի նկատումները, նաև այն, որ «Քոթերի» որդեգրած գաղափարնե-րը համահունչ էին հայ իրականության մեջ սրմատավորված ու տիրապետող իմաստա-սիրական ուղղությանը (նմոխնալիզմ):

Ս. Պ.-Տատոյանը, ելնելով իր աշխատանքի նպատակից՝ որոշ վերադասավորություն է կատարել Պլուզի երկի բնագրում, որով ա-վելի ամփոփ և համակարգված տեսք է տվել գործին: Այս վերադասավորությունը անհա-

մեմատ դյուրացրել է «Ի Տաճկաց»-ի ընկալումը և հատկապես նպատակահարմար է սկզբնաղբյուրի հետ համեմատելու համար: Հասկանալի է, հետագայում գիտական հրատարակությունների մեջ կախահամարի Պլուզի հեղինակային բնագիրը, բայց ուսուցական նպատակներով, կարծում ենք, կարելի է օգտագործել նաև վերակազմությունը:

Աշխատության մեջ Ս. Պ.-Տատոյանը նյութերը խմբավորել է ըստ հիմնահարցերի, նախ ներկայացնելով գիտությունների դասակարգումը, այնուհետև հաջորդաբար՝ իմացաբանության ու տրամաբանության, մարդու ինքնամանանշման, բնափիլիսոփայության ու բնագանգության, պատճառականության, արտագեղական տեսության վերաբերյալ դրույթներն ու դիտողությունները: Այս նույն հաջորդականությամբ համադրվում են բաղդատվող երկերի համապատասխան հատվածները: «Թղթեր» քաղվածքները, բնական է, բերվում են հայերեն թարգմանությամբ, որ կատարել է Ս. Պ.-Տատոյանն ինքը: Իսկ առավել ստուգության համար բերվում են նաև դրանց արաբերեն բնագրերը:

Ծանո կարևոր է, որ հետազոտողը չի սահմանափակվել միայն «Ի Տաճկաց...»-ի համակողմանի քննությանը և վերակազմությանը: Դեռևս 1958-ին Ս. Արևշատյանը շեշտում էր, թե «Պլուզի քազմաթիվ ատենախոսություններից ու քարոզներից շատերը դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրվել» (ԲՄ, էջ 299): Պլուզի վեց տասնյակի հասնող այդ գործերից Ս. Պ.-Տատոյանն արտածել է իմաստասիրական ուշագրավ ասույթներն ու մտքերը և դասակարգել գրեթե նույն սկզբունքով, որով վերադասավորել է «Ի Տաճկաց...»-ի բնագիրը: Դրանով գիտական շրջանառության մեջ է բերվում ահագին քանակությամբ անտիպ նյութ և հնարավորություն է ընձեռնվում ընթերցողին ավելի ամբողջական պատկերացում կազմելու Հովհաննես Պլուզի իմաստասիրական հայացքների համակարգի մասին: Բայց, որ թերևս ավելի կարևոր է, այս նյութերի հիման վրա հեղինակը շարունակում է հետախուզումները հայարաբական կապերի բնագավառում, ի հայտ բերում նորանոր գուգադիպություններ: Հեղինակը «Թղթերը» համարում է մեկը այն կարևոր ազդակներից, որոնք ծառայել են Հայաստանում նոսրանալիզի մի հետագա գարգացմանը: Ուշադրության արժանի են իմաստասիրական ինչ-ինչ գաղափարների ընդհանրությունները ԺԳ դարի հայ աղանդավորական շրջանների գաղափարախոսության հետ. հանգամանք, որ հաջողությամբ լուսաբանելով հայարաբական առնչությունների անհայտ ծայքերը՝ ընդարձակում է հայ արևելագիտության պատկերացումները: Այս տեսակետից են քննության առնված նաև Պլուզի «Սահման և կանոնք միաբանութեան եղբարց» և «Կըրկին կանոնք...» աշխատությունները, դարձ-

յալ համեմատելով և համադրելով արաբական համապատասխան բնագրերին, ի հայտ բերելով նաև նրանց ընդհանրություններն ու հնարավոր կապերը:

Պետք է խոստովանել, որ մեզանում շատ քիչ բան է արված հայարաբական կապերի ուսումնասիրության ուղղությամբ: Նաև այս ետնախորքի վրա պետք է գնահատել Ս. Պ.-Տատոյանի նախաձեռնությունը: Իր անմիջական խնդրից զատ նա կարողանում է ամփոփել և ուրվագծել այս բնագավառին վերաբերող փաստերը (խալիֆություն մեջ հայ պետական-քաղաքական և ուզմական գործիչներ, հայազգի թագուհի-արքայամայրեր և այլն): Առանձին ուշադրության է արժանի Թ դարի լիբանանցի գիտնական և թարգմանիչ Գուսթա իպն Լուքայի ծանոթությունը Անանիա Ծիրակացու ժառանգությանը: Առաջին մեզ հայտնի սահմանափակ թիվով փաստերի մեջ ընդգծվում է կշիռը «Ի Տաճկաց» աշխատության, որ այսօր գիտությանը հայտնի «միակ քաղուածքն է «Մաքրութեան եղբարություն» հանրագիտարանին: Ոչ միայն արաբական, այլ նաև ուրիշ ազգերու մեջ մենք ծանօթ չենք նման բացայայտ և տառացիորեն քաղուած երկի մը»: Սա եզակի փաստ չէ հայ մատենագրության մեջ:

Մեր հարևանցի ակնարկից արդեն իսկ երևում է, որ Ս. Պ.-Տատոյանի աշխատությունը ակնառու ներդրում է Հովհաննես Պլուզի գրական ժառանգության, հայ հասարակական մտքի և մատենագրության պատմության, հայարաբական, հայ-իսլամական հարաբերությունների լուսաբանության ուղղությամբ: Իհարկե, նրա որոշ ենթադրություններ հետագա ստուգման կարիք են գգում, ինչ-որ դրույթներ կարող են առարկության հանդիպել, բայց դրանք մասնակի նշանակություն կաշող են ունենալ:

Ս. Պ.-Տատոյանը ենթադրում է, որ Երզրնկացու երկը գրվել է 1250—1280 թթ. միջև (էջ 17) և հավանական է համարում, որ Պլուզը «իր արքիտրին ծանօթացած է երկրորդ անձի մը միջոցով» (18), և «փոխանցումը պետք է որ կատարուած ըլլայ բերանացի կերպով և Երզրնկացիի կեանքին շատ կանուխ շրջանի մը ընթացքին» (21): Այժմ մեզ հայտնի նյութերի սահմաններում թերևս կարելի է անել այս ենթադրությունները, բայց ոչ ավելին, որովհետև ինչքան ստաջ ընթանանք, այնքան պակասում է ենթադրողը, և դժվար է կոստել, թե ինչ մարդ էր «երկրորդ անձը», որին նկատի ունենալով Ս. Պ.-Տատոյանը գրում է. «Իր (Պլուզի— Ա. Խ.) թարգմանիչը՝ դատած իր տուած տեղեկութեանց ոճէն և մակարդակէն, սովորական ընթերցող մը չէ, այլ հաւանաբար զարգացած անձ մը, տեղեակ Ռասաէլին վարդապետութեան: Ուրիշ խօսքով, անկկա պետք է որ եղած ըլլայ պատրաստուած քարոզիչ մը: Այս անձը գիտէ տարրական խօսակցական

հայերեն: Իր Գիրքին տեղեակ այս թարգմանիչը փորձած է իմաստասիրության անտեղեակ Երզնկացիին բացատրել Ռասալիին նման հանրագիտարանային երկի մը բարդ տեսակետները» (18): Մի ուրիշ տեղ այդ ենթադրյալ թարգմանիչն արդեն կոչվում է «Երզնկացիի թարգմանիչ-ուսուցիչ» (111): Ուրեմն, նախաձեռնությունն ուրիշինն է, իսկ Երզնկացու դերը՝ կասկածելի, անորոշ: Այսպես մտածելու համար հեղինակին հիմք է ծառայել օտար բառերի անհետևողական գրությունը «ի Տանկաց...» աշխատության միակ ձեռագրում. ինչպես, ասենք՝ «ճառահար բառը, որ կը նշանակէ բուն էութիւն կամ գոյացութիւն, տառադարձուած է իբրեւ ճոհար, ճոհար, ճառահար» (17): Նախ, չի կարելի մոռանալ, որ պահպանված ձեռագիրը հեղինակային ինքնագիր չէ, այլ մոտավորապես չորս հարյուրամյակ նրանից հետո կատարված ընդօրինակություն: Դիտողությունն ընդունելի կլիներ, եթէ այն լիներ ոչ թե ԺԷ դարից, այլ Պլուզի ինքնագիրը, մանավանդ որ Ս. Պ.-Տառայանի դիտումով՝ «այսպիսի լեզուական անփութության չենք հանդիպիր Երզնկացիի որևէ ուրիշ գործին մէջ»: Մյուս կողմից, եթէ անհետևողականությունն չէ, գոնե բացատրության կարիք էր զգում այն հանգամանքը, որ ուսումնասիրողի հավաստմամբ՝ արաբական թարգմանական գրականությունը միջնադարում ստեղծել են ոչ թե արաբներն իրենք, այլ քրիստոնյա մտավորականներն ու եկեղեցու հայրերը (24), իսկ այստեղ գործ ունենք հակառակ երևույթի, բացատրության հետ. «ի Տանկաց...» աշխատության նախաձեռնողը և թարգմանիչը իմայիլական քարոզիչ է, մահմեդական, որ «գիտէ տարրական խօսակցական հայերեն», «իսկ փոխան-

ցումի միակ միջոցը Իմայիլական շարժումն է» (21): Մեզ թվում է, որ չափազանցված պիտի լինի «Մաքրության եղբայրության թղթերի» նշանակությունը այս հարցում: Իսկ ընդհանրապես բաղդատությունից բխեցվող յուրաքանչյուր եզրակացություն ու պնդում խստորեն հենվում է փաստական նյութի վրա: Նկատելի է հեղինակի ուշադիր վերաբերմունքը փաստարկման նկատմամբ, քարեխիղճ և պահանջկոտ է իր դրույթները հիմնավորելու, եզրակացությունները կարելովն չափ համոզիչ դարձնելու համար: Նույնպիսի բծախնդրություն է նա ցուցաբերում եզրույթների նկատմամբ:

Վերևում խոսվեց ուսումնասիրության առարկայի կարևորության և արդիականության, հիմնախնդրի մշակվածության և աշխատության բերած նորույթի մասին: Լինելով առաջին ամբողջական հետազոտությունը նվիրված հայ-արաբական իմաստասիրական կապերին, գիրքը կարևոր ներդրում է նաև այդ ասպարեզում. մեծապես հարստացնում է մեր պատկերացումները հիշյալ կապերի բնույթի, մակարդակի և իրականացման ուղիների շուրջը: Սրանով ընդլայնվում են մեր գիտանքները հայոց հասարակական մտքի զարգացման ընթացքի վերաբերյալ, ստեղծվում են ավելի հաստատուն հիմքեր միջնադարյան խոշոր գործչի դիմաստվերն ամբողջացնելու համար: Աշխատության նշանակությունն ընդգրծվում է նաև նրանով, որ հեղինակի առաջադրած տեսական դրույթները, եզրակացություններն ու հանձնարարականները կիրառելի են ընդհանրապես հայ մշակույթը, համապատասխան դարաշրջանի հայոց պատմությունն ուսումնասիրելիս:

Ա. Ա. ԽՈՒԳԱՎԵՐԳՅԱՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳԻՐԸ

Պարագաներու բերումով, Արծանթիմի հայ համայնքը, որ Միփոքի ամենէն կարեւորներէն կը նկատուի, շատ երկրորդական մասնակցութիւն մը բերած է անոր իմացական կեանքին: Այս իրողութիւնը դիրտութեամբ կը ստուգուի շրջանի մամուլի ընթերցումով, հրատարակութիւններու որակի քննութեամբ, եւ այլն:

Բայց ասիկա չի նշանակեր, որ զարթօճալը բոլորովին անույ եղած է այդ առումով: Թէն տեղական ուժեր գրեթէ չէ տուած, դուրսէն եկած ու հոն հաստատուած դէմքերու փոքր հոյլ մը ըրած է կարելին: Անոնց շարքին, ու առաջնակարգ մակարդակի վրայ, պէտք է նկատուի առնել Հարաւ Ամերիկայի Հայոց Թեմի առաջին Հայրապետական Պատ-

տուիրակ Գարեգին արք. Խաչատուրեանը (1880—1961)¹:

Կազմաւորումով Գարեգին արք. կը պատկանէր Արմաշի դպրեվանքի այն սերունդին, որ արեւմտահայ գրական-մտաւորական կեանքին մէջ պիտի ներմուծէր Հայ Եկեղեցու

¹ Կենսագրական համառոտ տուեալները տե՛ս Գառնիկ Ստեփանեան, Կենսագրական բառարան, հ. Բ., Երեւան, 1981, 49—50, ուղղելի կէտերով (Հարաւ Ամերիկա պաշտօնավարութիւնը պէտք է ըլլայ 1938—50, «Ծողակաթ» ամսագիրը լոյս տեսած է Պոլիս, 1952—58ին, մոռցուած է Հարաւային Ֆրանսա պաշտօնավարութիւնը 1935—38ին եւ «Արարատ»ի հրատարակութիւնը):